Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2022/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան *11.07.2022թ, ժ 10:00, ք. Սևան, Նաիրյան, 164*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղուկասյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մկրտչյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխ. մասնագետ

Մար. Մկրտչյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի մասնագետ

Է. Ղազարյան – Սևանի քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական աշխատանքների համակարգող

Մ. Ավետիսյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2022/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և միաժամանակյա բանակցությունների նշանակման մասին

---

1. *Ընդունել ի գիտություն, որ՝*

1.1 Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 30.06.2022 թ հրավերը տեղադրվել է www.armeps.am էլեկտրոնային գնումների կայքում և հրապարակվել է www.gnumner.am կայքում: Նիստը սկսվեց 11.07.2022թ. ժամը 10:00-ին, իսկ 1 աշխատանքային օրով կասեցումից հետո շարունակվեց 13.07.2022թ. ժամը 10:00-ին:

1.2 Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի փողոցների նորոգման և ասֆալտապատման, ջրամատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2022/4 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցե և հեռախոս
1	*"Ծովագյուղի ՃՇՇ" ՍՊԸ և "Կապավոր" ՍՊԸ կոնսորցիում*	*Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, փ. 1, տ. 46, հեռ. 077700994, Ք. Երևան, Շիրակի, 47/12, հեռ. 060651555*
2	*"Գլավդորստրոյ" ԲԸ*	*ՌԴ, ք. Մոսկվա, Վերնայա փողոց, շենք 1/4, հեռ. 033010074*
3	*"Բարեշեն Տանիք" ՍՊԸ*	*Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, 1 թաղ., 2/10, հեռ. 098886896*

2. *Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.*

- "Գլավդորստրոյ" ԲԸ հայտը կազմել և համակարգ է մուտք արել 08.07.2022թ., սակայն փաստաթղթերը ստորագրող անձը դրանք ստորագրելու լիազորություն (իրավասություն) այդ օրվա դրությամբ չի ունեցել, լիազորված անձի լիազորությունները պետք է սկսվեին 11.07.2022թ.: "Գլավդորստրոյ" ԲԸ հայտը կազմվել և ներկայացվել է ոչ իրավաչափ գործողության արդյունքում, ուստի այն իրավաչափ չէ և ենթակա է մերժման: Գնային առաջարկ ներկայացրած մյուս մասնակիցները հայտը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. *Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

- հայտ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին, իրական շահառուների մասին տվյալներ, աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվ, գնի առաջարկ: Ծովագյուղի ՃՇՇ" ՍՊԸ և "Կապավոր" ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում տեղ գտած հրավերի պահանջներին անհամապատասխանությունների ուղղման համար

նիստը 1 աշխատանքային օրով կասեցվեց և շարունակվեց հուլիսի 13-ին ժամը 10:00-ին: Բացված հայտերում հրավերով պահանջվող մյուս բոլոր փաստաթղթերը առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- Ծովագյուղի ՃՇՇ" ՍՊԸ և "Կապավոր" ՍՊԸ կոնսորցիումի հայտում տեղ գտած անհամապատասխանության (հայտում ներառված ծավալաթերթ-նախահաշվը պարունակում է բազմաթիվ թվաբանական սխալներ, նշված չեն աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները և իրական շահառուների մասին հայտարարագրում ստորագրված չէ 1.3.3 տողը) ուղղման համար հանձնաժողովը նիստը մեկ աշխատանքային օրով կասեցրեց, իսկ ' Ծովագյուղի ՃՇՇ" ՍՊԸ և "Կապավոր" ՍՊԸ կոնսորցիումին ծանուցվեց տեղ գտած անհամապատասխանության մասին, առաջարկով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղղելու անհամապատասխանությունները: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանված ժամանակընթացքում հայտում տեղ գտած անճշտությունները շտկվեցին: Մասնակիցների կողմից ներկայացված մյուս բոլոր փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

- գնահատող հանձնաժողովի կողմից "Գլավդորստրոյ" ԲԸ հայտը գնահատվեց հրավերի պահանջների ոչ համապատասխան և մերժվեց, մյուս մասնակիցների ներկայացրած հայտերի ոչ գնային պայմանները էլեկտրոնային եղանակով գնահատվեցին բավարար:

- Միաժամանակյա բանակցությունները նշանակվեցին 2022թ. հուլիսի 18-ին ժամը 11:00-ից մինչև 11:15-ը, ք. Սևան, Նաիրյան 164, 16 սենյակ հսցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Մասնակիցների առաջարկած գները՝

ՀՀ դրամ

"Ծովագյուղի ՃՇՇ" ՍՊԸ և "Կապավոր" ՍՊԸ կոնսորցիում				
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի փողոցների նորոգման և ասֆալտապատման աշխատանքներ	213899125	42779825	256678950
2	Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքներ	15582667	3116533,4	18699200,4

թվաբանական սխալներ չկան

ՀՀ դրամ

"Գլավդորստրոյ" ԲԸ				
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի փողոցների նորոգման և ասֆալտապատման աշխատանքներ	213750000	42750000	256500000

թվաբանական սխալներ չկան

ՀՀ դրամ

"Բարեշեն Տանիք" ՍՊԸ				
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
2	Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքներ	16115794	3223158,8	19338952,8

թվաբանական սխալներ չկան

6. Գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց "Գլավդորստրոյ" ԲԸ հայտը գնահատվել հրավերի պահանջների ոչ համապատասխան և մերժել: "Բարեշեն տանիք" ՍՊԸ-ի և "Ծովագյուղի ՃՇՇ" ՍՊԸ և "Կապավոր" ՍՊԸ կոնսորցիումի ներկայացրած հայտերի ոչ գնային պայմանները գնահատվեցին բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատող հանձնաժողովը որոշեց "Բարեշեն Տանիք" ՍՊԸ-ին և "Ծովագյուղի ՃՇՇ" ՍՊԸ և "Կապավոր" ՍՊԸ կոնսորցիումին հրավիրել գների իջեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների 2022 թ. Հուլիսի 18-ին ժամը 11:00-ից 11:15-ը՝ 1-ին չափաբաժնով, և ժամը 11:20-ից մինչև 11:35-ը՝ 2-րդ չափաբաժնով: Միաժամանակյա բանակցությունները տեղի կունենան ք. Սևան, Նաիրյան, 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ՝ գների իջեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման, նիստը հրավիրել 18.07.2022թ., ժամը 11:00, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա.Ղուկասյան

Անդամներ՝ _____ Մ. Մկրտչյան

_____ Մ. Ավետիսյան

_____ Մար. Մկրտչյան

_____ Է. Ղազարյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան